ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

Դատական դեպարտամենտի կարիքների համար փաստաթղթերի ոչնչացման սարքերի և հեռախոսային սարքերի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-24/11» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

«08» մայիսի 2024թ.
Ժամը՝ 11:00

Մասնակցում էին՝

հանձնաժողովի նախագահ՝

Արթուր Ասատրյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար

հանձնաժողովի անդամներ՝

Խորեն Պետրոսյան՝ Դատական դեպարտամենտի համակարգչային ծառայության պետի ժամանակավոր պաշտոնակատար

Նորայր Աղամալյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար

Տիգրան Զեյնալյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի գլխավոր մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար

հանձնաժողովի քարտուղար՝

Գայանե Դավիթյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Գնումների համակարգման բաժնի գլխավոր մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար

Նիստից բացակայում էր՝

Սեդրակ Սարդարյան՝ Դատական դեպարտամենտի համակարգչային ծառայության գլխավոր մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար

1. Տեղեկատվություն՝ գնահատող հանձնաժողովի նիստը կասեցնելու վերաբերյալ.

«Ի ՋԻ Էլեկտրոնիքս» ՍՊԸ-ն էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում հայտարարությամբ (Հավելված N 1) հայտարարել և հավաստել է, որ «Ի ՋԻ Էլեկտրոնիքս» ՍՊԸ-ն և իրեն փոխկապակցված անձինք բավարարում են «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-24/11» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին:

«Ի ՋԻ Էլեկտրոնիքս» ՍՊԸ-ի հայտը ուսումնասիրելիս գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրվել է, որ www.procurement.am հասցեով գործող գնումների պաշտոնական տեղեկագրում հրապարակված՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 12.09.2023թ.-ից մինչև 12.09.2025թ., 23.09.2023թ.-ից մինչև 23.09.2025թ., 07.11.2023թ.-ից մինչև 07.11.2025թ. և 02.12.2023թ.-ից մինչև 02.12.2025թ. ժամկետներով ներառված «Լեդարմ» ՍՊԸ-ի (ՀՎՀՀ 00517511) մասով որպես մասնակցի գտնվելու կամ բնակության վայր նշված «ք. Երևան Ֆրունզե 13» հասցեն և «Ի ՋԻ Էլեկտրոնիքս» ՍՊԸ-ի (ՀՎՀՀ 02315393) հայտով ներկայացված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում հայտարարությունում (Հավելված N 1) որպես մասնակցի գործունեության հասցե նշված «ք. Երևան Ֆրունզե 13» հասցեն նույնն են:

Միաժամանակ՝ ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 121-րդ կետով սահմանված է, որ մասնակցի՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված ցուցակում ներառվելը, դրանում գտնվելու ժամանակահատվածում, ինքնաբերաբար հանգեցնում է վերջինիս հետ փոխկապակցված անձանց գնումների գործընթացին մասնակցության իրավունքի սահմանափակման:

Վերոգրյալով պայմանավորված՝ հանձնաժողովը որոշեց.

- նիստը կասեցնել, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 67-րդ կետի պահանջներով, մասնակցի ներկայացրած տվյալների իսկության ստուգման նպատակով, գրությամբ դիմել ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալություն՝ «Ի ՋԻ Էլեկտրոնիքս» ՍՊԸ-ի և «Լեդարմ» ՍՊԸ-ի հնարավոր փոխկապակցվածության հանգամանքը բացահայտելու համար:

- հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունից պատասխան գրության ստացմանը հաջորդող աշխատանքային օրը՝ ժամը 11:00-ին, Դատական դեպարտամենտի կենտրոնական մարմնի վարչական շենքում (հասցե՝ ք. Երևան, Կորյունի 15/1):

Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ _____ Արթուր Ասատրյան

Անդամներ՝ _____ Խորեն Պետրոսյան

_____ Նորայր Աղամալյան

_____ Տիգրան Զեյնալյան

Քարտուղար՝ _____ Գայանե Դադիվանյան